



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային Քաղաքականության Երկխոսություն ծրագրի Համակարգող Կոմիտեի  
2007թ սեպտեմբերի 28-ին կայացած ընդլայնված նիստի

Ազգային Քաղաքականության Երկխոսություն ծրագրի զարգացման նպատակներին  
հասնելու և Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերի  
ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ֆինանսավորման աջակցություն

ք.Երևան

Համակարգող Կոմիտեն հետևյալ կազմով՝

- Գ.Խաչատրյան                    ԶԶ տարածքային կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (Համակարգող Կոմիտեի նախագահ)
- Ա.Մարտոսեվիչ  
Վ.Նարիմանյան                ՏՀԶԿ/ԲԳԾ հատուկ աշխատանքային խմբի քարտուղարություն ԶԶ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ
- Հ.Եսայան                        ԶԶ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության ջրային տնտեսության ծրագրերի բաժնի պետ/վարչության պետի տեղակալ
- Յ.Պողոսյան  
Ն.Բակունց                      ԶԶ վիճակագրության պետական խորհրդի անդամ ԶԶ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության բաժնի պետ
- Լ.Կարապետյան                ԶԶ ջրտնտեսությունի նախագահի խորհրդատու(Համակարգող Կոմիտեի քարտուղար)
- Ա.Մալխասյան                 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ հասարակության հետ կապերի տնօրեն
- Ա.Հովսեփյան  
Յ.Յանթսեն                      «Երկրի Ջրային Համագործակցություն» ՀԿ խորհրդի անդամ Շրջակա միջավայրի կիրառական տնտեսագիտության ինստիտուտի (TME) տնօրեն

Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝

- Ա.Խաչանյան                      Հայաստանում KfW գրասենյակի ծրագրերի օգնական
- Մ.Վարդանյան                 ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության բնապահպանության և բնական ռեսուրսների մասնագետ
- Ա.Դարբինյան                 Միացյալ Թագավորության միջազգային գործակալության բաժնի ղեկավար
- Ա.Սիմոնյան                    Հազարամյակի Մարտահրավերների Հայաստանյան Հիմնադրամի բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավար
- Գ.Արզումանյան                ՄԱԿ-ի զարգացման ծրագրի բնական ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման ծրագրի ղեկավար
- Հ.Ղազարյան                    ՌԷԿ կովկասի հայաստանյան մասնաճյուղի համակարգող





**Հրավիրվածներ՝**

Մ.Սկրտունյան	ՀՀ ջրտնտայետկոմիտեի ֆինանսատնտեսագիտական, հաշվառման և իրացման համակարգման վարչության պետ
Ա.Բարսեղյան	Ասիական զագրացման բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ
Վ.Տոնոյան	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի ինստիտուցիոնալ մասնագետ
Ա.Խարազյան	Ջրային և էներգետիկայի գծով փորձագետ, TME

1. Ընդունել ի գիտություն խորհրդատու Յ.Յանթսենի կողմից ներկայացված «Ջրմուղկոյուղի ընկերությունների կողմից չսպասարկվող գյուղական բնակավայրերի հարցաշարեր» զեկույցը:
  - 1.1. Արձանագրել, որ նվազագույն ջրամատակարարման հարցին վերջնական լուծում տալը դժվար է առանց ոռոգման և ընտանի կենդանիների անհրաժեշտ ջրով ապահովման խնդրների քննարկմանը: Խորհրդատու Յ.Յանթսենին՝ տալ հայեցակարգային մոտեցումներ վերը նշված խնդրի վերաբերյալ:
2. Ընդունել ի գիտություն խորհրդատու Յ.Յանթսենի կողմից ներկայացված «Տարբեր պայմաններում գյուղական բնակավայրերում ջրամատակարարման արժեքի օրինակներ» զեկույցը:
3. Ընդունել ի գիտություն խորհրդատու Յ.Յանթսենի կողմից ներկայացված «Ջրամատակարարման նվազագույն ստանդարտներ և համատեղված Ջրամատակարարման նվազագույն ստանդարտներ ու Աղքատության նվազեցման ռազմավարության թիրախներ» զեկույցը:
4. Քննարկված հարցերի վերաբերյալ լրացուցիչ առաջարկություններ ներկայացնելու դեպքում նախատեսել 20 օրյա ժամկետ:
5. Խորհրդատու Յ.Յանթսենին՝ հինվելու քննարկման արդյունքների և ստացված դիտողություններն ու առաջարկությունները վրա ամփոփել հաշվետվությունը, ներառելով անհրաժեշտ այլ տվյալներն ու կատարել համապատասխան ճշգրտումներ:
6. Սահմանել, որ Համակարգող կոմիտեի հաջորդ նիստը տեղի կունենա ս.թ. նոյեմբեր ամսի կեսերին: Հանձնաժողի քարտուղար Լ.Կարապետյանին և խորհրդատու Յ.Յանթսենին՝ 20 օրյա ժամկետում տալ առաջարկ հաջորդ նիստի օրվա վերաբերյալ և ներկայացնել օրակարգի նախագիծը:
7. Ընդունել ի գիտություն, որ Համակարգող կոմիտեի բոլոր նյութերը տեղադրված են [http://www.tme.nu/english/Arm\\_Steering\\_Committee.htm](http://www.tme.nu/english/Arm_Steering_Committee.htm) ինտերնետային կայքում:

Համակարգող կոմիտեի նախագահ,  
 ՀՀ տարածքային կառավարման նախարարության  
 ջրային տնտեսության պետական կոմիտեի  
 նախագահի առաջին տեղակալ

Գ.Խաչատրյան

